Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինը 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Դեկտեմբերի 5-ին. Թիֆլիս. №49.



Издж.-Лит. С. Быхова, Тифлисъ

Ասա՛ ծերուկ, շատ կը ճամփէդ գլխի այն լոյսը. տես երկա՞ր է ճանապարհը

(Ըստ Մ. Մանուէլեանի «Շեղուածներ» նոր պիեսի)

# Իշխան Միքելաձե



—Թիֆլիզում, հարկաւոր էր լինում երկու տեսակ գլխարկ գործ ածել, հայ կամ վրացի լինելս ցուցնելու համար, հիմայ Պետերբուրգում ես ո՞ր մէկ գլխարկը գլխիս դնեմ, որ համակրանքներս էլ այնպէս պահպանեմ։

## ԼՈՒՍԱՆԿԱՐՉԻ ՄՕՏ



—Մի քիչ գլուխդ վերեւ պահեցէք, մէջքը ուղղեցէք, դէմքին տուէք արտայայտութիւն մի... վերջապէս լա՞ւ էք, մի փոքր ժպիտ...

—Տուէք ինձ մի հազար, կամ թէկուզ հարիւր րուբլի եւ ես ուրախութիւնից կը պարեմ, այլ կերպ չեմ կարող դէմքս փոխել

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910

5 ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

5 ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարելու, քննադատելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդեալ ընթերցողները ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ԵՆ ամէն տեսակ պատահարներից և խայտառակութիւններից։

Խմբագրութիւնը բաց է երբ փակ չէ, և գտնւում է Սերգէևսկայա փող. № 1

Տան հմր. Միրզոյեանների վերի յարկում

Յայտարարութիւններ ամէն լեզուներով և խիստ մատչելի գներով։

Մեր ընթերցողներին մաս ենք ածում սեփական աէրօպլաններով։

Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրոպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկում ենք ձրի։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը 5 ր. |
| Կէս տարւանը . . . . | 2 ր. | . . . 3 ր. |
| Երեք ամսւանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . | 50 կ. | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՒԱՑ ՎԵՐՋԸ «ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԱՐԺԷ 50 ԿՈՊ.

Ի նկատի ունենալով մեր բաժանորդների կրկնակի խնդիրները, մենք կրկին անգամ՝ ուղարկում՝ ենք նրանց բաժանորդագինի համար փոխադրական բլանկներ։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» արժէ 5 րուբլի ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ 7 ր. Միասին արժեն 10 րուբլի.

Երկու թերթի միացրած բաժանորդագինը կարելի է ուղարկել և այս բլանկներով և Խաթաբալայի հասցէով։

**— Խաթաբալիստներ բոլոր երկրների օգնեցէք և մեր թերթերին բաժանորդ գրուեցէք։**

## ՀԱՅՈՑ ԹԻԱՏՐԸ

Էրկու տարի առաջ, երբ վուր հայոց թիատրու էրկուքսան ու տասն տարւայ օրէն կատարւում էին, յուսահոքի Զարքարը հէնաի թանխէք էր տալի հայոց տխմոխ ակլին, վուր կօսխ Ռուսիգի պրիկազչիկը ըլէր։

Քասսուն ու ութ տարեկան թիատրին էրկուքսան ու տասն տարեկան արաւ. ով վուր տարիքը կու պակասցնէր՝ ան հոլա էրկու տարի էլ ունեցրէրիգ, թէ ինչ է՝ փուղ կու մօղ անէ ու սակութար ակայէն թիատրը կու չինէ։

Զարքարը միզ խափից, Աստուծ իրէն կինք տայ, ակն էլ Զարքարին խափից ու սակութար թիատր կի չէ. սակութար թուլա էլ չը չինից, վուր մեր աքտիօրները խանդխխան ջիբիթ տան անմուհնաթ։

Մախս գալիս է խանդխխան, թէ վունց մեր Միշա Զարքարը մէշախը կաղնած, յօղօղ Լեան Բարայիճ էլ կոխկին պալօյի հանգը ցցած, Կարապետ Շիրինոճ էլ մարթամէչ գցած, ու դուք իք իմ պարուն, մեր ազիզ քաղկցի Սունդուկովնեց Գաբրիէլն էլ Արտխատուլի թիատրի բեմի մէչ տխըը բազմեցրած՝ շնուրաուրաքնիր, խասուաւթիր ու թանխէք էր տալի հայոց ակլին ու ակլի փօղրաչի գուրծիչնիրին էլ դրանց՝ վուր շատ չի անցնի ու հայոց թիատրը կու բացւի։

Հայոց թիատրը ու էն էլ սակութար՝ բացւում է, մաշ, բացւում է։

Թաթարևախնի մէ բան վուր ըլի, ամ ակլի գուրծիչնիր, մէ մուլթա կուրօ վուր ըլի, ամ հայ ակլի ակտաւէրնիր, չիք պառկի.

Տօ, պառկեցէք էլի. դիմ իք, վուր չը պառկիք։

Հէյ դիդի հա՛, խալխ ու ժամանակ։

Ափսո՛ւս, ափսո՛ւս օթախնիր, վուրդի տար ապրում իք, ափսո՛ւս քաղքի քուչէք, վուր մանգալով քարերը մաշումիք։

Զիզ սաղ ինչ լայիղ է։

Հէր օխտածնիր, դուք պիտիք Սուսախնակի, ան Թանխատուրդինակի թագրումը ապրէք ու մահ գաք։

Հայոց թիատրի սակութար շէնքն էլ շինւում է Խօջիվանքում։

Ու մեր թիատրի վարչութէնի չլէնիրը կի փախչում իմ. ու փախչում իմ հէնաի աշխարայ, կօսխ վունչիչ։

Սրանք վուր ակլին հէնաի խափեցին, վարչութէնի անթամնիր ջօջւեցին, մինձ մինձ թանխէք ուխին, պարզ ճակատով գիրեկաօրի յօժէքը նատեցին, նրանք վուր խակի գվօրնիցկի տեղ չը պիտի ունենային, նրանք էսօր չին գիդի, թէ ինչ անին ու վունց անին ու Ամբարցում Առաքելովի բերնով էլ ուզում են, ասոր հայոց թիատրի անումը, բուլւորի վրից, Արտխատկում՝ մօշկա ունին, ու խանդխխան կի Զուբալովում խաղան։

Լաւ իս անում։

Էնդի մուքթա է։

Մուքթէն դիփ լաւ է։

Ու... ասում էինք թէ քէլեխ ուտող չինք։

Մուքթա կուրօ էլ վուր ըլի, մենք հայերս ու մեր ակլի գուրծիչնիրը հէնաի մարթիք ինք, վուր կուրօյի խաթրու կու մեռնինք ու չինք փիրք անի, թէ ամեր սիրուն օղլուշաղ ու բարփա (մանկահասակ) վուրթիք ունինք։

Ու դուզին վուր հայերս խելքի գանք, կրթւինք ու մարիփաթ սովորինք։

Ինչի չէ. էս էլ լաւ է։

Աստուծ հոգին լուսաւորի Զուբալովի, վուր մեռաւ ու անդերձ արաւ, վուր թիատր շինւի ու հայ ակլի բուրժուէքը գնան ու էնտանից էլա մարթ դառնան։

Հալբաթաս, էդ էանէնց պիտ ըլէր.

Ով գիտա թէ աքլորը քանի ջէր կանայ կանչի օրեկան։

Զուբալովի տանը պտի հասուց ասկի ճաշակը կրթւի էնչախը, իփ վուր արտնիրը, վրացիքը ու վերջիրն էլ թուրքիրը, ադրբէջանի թրքերը, Բորչալուի Թարաքամէքը՝ համ Արծունովի, համ Կազօնի ու Արտիստական Թըխատրումը, ու խաղումին, ու քըքըչում, համ իրքումին, համ պարում, համ էլ փուղ ին դաղում։

Իս ուփրո լաւը կօսիմ, աբէք միր աքտիօրներուն մեռցնինք, դրանց հէրն էլ անիծած, մի ինչ վուր Սեւումովը խօ կայ Զուբալովի Թըխատրում, վուրը ինտերփօրէ տալի ու ասում՝ թէ հայերը վունձ Թըխատրի օսկէ դար ին ունիցի ու վունց օրինատար աքտիօրնիր։

Էս Սեւումովին վուր պտհ տանք ասկը ու մէկէլ Հ. Աբաքելովին, ան դրամատիկական նըրնգիրութէնի վարչութէնին, միր հասուց ասկը թէ չէ, ով գիտա մյթանի ասկիրն էլ կուկրթւին գեղարուէստուլի էլ ու աջափսանդուրի էլ։

Իս դարուլ իմ ու հեսաի փիքրի էլ իմ, վուր արքաութինը հեռու չէ, թէկի ասկը միր թաւուր պապուչհանեյնիր ու Զարարի, ան Լեոն Բարայովի պէս ասկի գուրծիչնիր ունի, էսաի էլ ի՞նչ վախ։

Ափսուս, ափսուս բուլւմը.

Տօ բաս բոյներիցդ չիք ամանչում, ասինք Հ. Ա. իրա բոյին չի տեհնում վունց մի տիղ, չունըրի խիստ պատիկ ա. բա ձիր երկու էստժանի կրնգնեբով լարչիքը-շիրլէմներն ասիմ, թէ եւրոպեսկի շլապէքը. էդ գալուստիկների տիղ վուր թօկ ունինաք բոզըին կապած՝ ուփրո լաւ չի՞, քանց թէ ասկի ջուղար ջուրամի մէջ նըրնգնում իք ու վերջն էլ Զուբալովի թըխատրովը կուգիք վուր հայ ասկի համա արտիստնիր՝ Ադամեաններ, Սիրանուշներ, Հրաչեաններ, Թուրեաններ, Մհակեաններ, Ամբիկեաններ, Սուքիասեաններ Պետրոսեաններ ծնուի՞. համա ի՞նչ իմ ասում. դրանք ավքեր ին, դրանք բեսաք նամաղուլ ին արի գօկ Սեւումովի տալանտի ադաք, չունըրի նա էր վուր ասել էլ «Մշակի» բէ-պէ-տէ-րին, թէ հայերս թըխատրի օսկէ դար չինք ունիցի, կօսէ.

Պարոն Հ. Ա. ասում է Զուբալովի թըխատրումը լաւ կուլի կօսէ. Զաբարն էլ կուլի վուր ասէ, Ավճալսկին ուփրո լաւ կուլի. դրամէն մէ 8—10 տարի ադաք, օղորմած հոքի Գալիցինի օրօք ու նրա հրամանքով, Հաւլաբարի Պակրօյցկի ու Արսէնալի կազարմէքուճն էլ թըխատրնիր էին սարքում հայերէն. էդ տեղերանք էլ վուր սարքինք, փաշման կուլինք, չէ. դատումը աշկարայ է։ Թաք կի մեղնից աշով փող չուզէ, ու ամէն մի օգիզայդի մարթա մէջ երեսայ, գլխումը երկու գրօշի վունց խիլք ու վունց ուզուփ ունենայ, հասուց թըխատրի բաննէլ ու հասուց մինձ ասկն էլ, մինձ կուլի ու կուլի։

Հայերս ինչ գուզինք.

Մուրթակուրօ—ասկի գուրծիչ, մէջը պարկի ու լող տուր։

Քէփէ ու քէփ։

Գասպար Կալատուզեան

---

## ՀԱՏՈՒՑՈՒՄՆ

Թեմեն կանանց ծախու կրծքին,
Մագն ու խելքը մոռացած,
Նա՝ նպատակ հիւանդ կրքին՝
Սնա մի կոյս ամօթխած.

Բայց մատաղհաս աղջիկը այն,
Անարգված սառ շնչից՝
Անիծելով բաղդը դաժան,
Մի օր փախաւ իր կողքից...

Ո՞հ, ծերունին աչքերը թաց,
Հայածական սեւ վշտից,
Դուռէ ի դուռ՝ «խայտառակված»՝
Ճար է հայցում ամենից.

Ու մոռացված այն «որսացու»
Ընկերների ծաղրանքից,
Կատաղաթեամբ՝ վրէժի ծարաւ՝
Կրակ է թափում աչքերից...

Երեկ՝ ծեծված շանը նման՝
Նա՝ կողքերը ներս գցած,
Թափառում էր գժածի պէս
Փողոցները գլխարաց...

Գէօ-Գէօ

---

## ՅԱՄԵՆ ԲԱՆ ԹԱՐՍԻՒՐ Է

Յամեն տարի իսի վախթս, նոյեմբերը կէս չեղած, տան ձունը գլխներուս պարկէր կը. յամեն բան սառէր կը, ղափղները կախէինք կը, փեչքերը վառէինք կը, դուռ ու յերթիկ դայմցնէինք կը, Սափաչայի վրայ նեժնի խանումներու հետ կօնկայ խաղայինք կը, բաղի բաղի ալ յաունիրս պլըստէր կը, անկլադոշիկ խաղայինք կը, խանումի հետ մէկ տեղ պղի վրայ յէրկան պարկէինք կը, խալխօլանին ձրանները խնդացնէինք կը։ Հմը աս տարի, ահա աօր նոյեմբերի 14-ն է, դահա ոչ ձուն է էկեր, ոչ դաու է գըեր, ոչ ջուր է սառեր... յարտերը, բաղչէրը յերթկները, թաղատան ծլեր ու ծաղկեր են, Թամամ յերեք ամիս գլէկը, օր, գիշեր ու զօր հայ-բրայ հայ թօնր մէ դարդար շըռշըռակը։ Գիտես թէ յերկնքի փորը պատռեր է, որ հէչ չի դընջանայ։ Բիթուն տները կաթէ կը։ Ես ալ դրկցներուս պէս, տանըս մէջը զօնթիկով ժուռ դուգամ կը։ Հագար չեշիտ աման չաման, դազանմազան, տաշտ ու քուղայ շարեր ինք պօլերուն վրան՝ կաթիլկին տակը։ Մէկին մէջ չը՛թ-չը՛թ. մէկալին մէջ բըը՛ղկ բըը՛ղկ. աս քեօշան դազանին մէջը ճըը՛նկ. ճըը՛նկ. աս թարաֆը ծըլ ծըլակը. անթարաֆը շըռշըռակը... դէ արի աս դարդը քաշէ։

Օդատուսին մաստաղ կենէինք կը, թէ Աստուած քանիմ կաթ ջուր հասցնէ մեր վառած յարտերուն։ Հիմի ալ մաստաղ կենինք թէ, Աստուած, թըրշած մուկ դառանք, հերիք է շըռշըռացնիս, տներս քանդուաւ. ընելու տեղ բիլա չունինք։ Վա՜յ, անմատուած Աստուած, հէչ մեր սըզըլթուն գիմանմա. հէչ յանկաջ կենիս. Երնէ՛կ դանգինններուն. սարադիլը տան գլուխն չինիր. արխէին քէֆ կէնին կը, հողը աղքաններուն գլխուն։ օր, կաթիլքին մէջ, դաղի պէս լող կուտան կը։

Յամէն բան թարսուիր է։ Վախթմ աղջիկ նշանելիս գովէին կը թէ. «լաւ հաց թխէ կը, համով բողբաշ էփէ կը, դուռ ու տան յիսատակ պահէ կը, կար՝ ու խալի գործէ կը. կար ու ձև կենէ կը. նըխշ ու նկշկեար շինէ կը, հալալ կաթնակեր է, ադուտով նամուսով յիսան է»։ Հիմի ալ աղջիկ նշնելիս՝ գովին կը—յէրկան մազեր ունի, սուրէի բոյ ունի, բարակ պուկնիր, մանր յոտներ, լաւ տըրընկի խաղայ կը, ոէմօր լուս լօտօ խաղայ կը, յամեն չեշիտ կուալերներ յեռեէն ման կածէ կը... հմը կերակուր էփել, կար ու ձև, կուխնի էրթալ, իրեն էրէխին ծիծ տալ, աապէս ծըռտի պատի նաֆիլա բաները հետ գլուխ չունի, տանը գեղացու աղջկայ գործ է։

Դալայչի Մարգար

---

## ԳԻՍԻՑ-ԳԻ՛ՆՑ

—Լսիր Սարգիս, կարծեմ դու «Սանինը» կարդացել ես, ի՞նչ է ասում ազատ սիրոյ մասին, կամ դու ինչպէս ես հասկանում։

—Օ՜... որքան լաւ է ազատ սէրը, ազատ ու անարգել սիրել՝ ում որ կուզես, գրկել. համբուրել...

—Ուրեմն դու էլ կողմնակից ես դրան։

—Ինչպէս չէ։

—Շատ լաւ, իսկ եթէ քո քրոջ հետ էլ նոյն կերպ վարուէին ուրիշները, թոյլ կը տայիր։

—Ես... հ՞ը... չգիտեմ...

—

—Թագուհի, ինչու աղջկանց նշանը յետ տուին։

—Որովհետեւ խոստացած բաժինքն ու

քըթամը չկարողացանք տալ։

—Լաւ, ինչու էիք այդքան խոստանում...

—Դէ, մենք կարծեցինք, թէ ուրիշների պէս կարող ենք խոստանալ ու չտալ, երբ ոգային տաքացրած կլինենք աղջկայ վրայ, կամ մեր թակարդը ձգած, բայց... չեղաւ։

—

—Ո՞րն է մայրերի առաջին և մեծ հոգսը։

—Աղջկերանց համար հարուստ փեսացու, իսկ տղերանց համար էլ, նոյնպիսի հարսնացու գտնելը։

**Յով-Մար**

---

## ՏՕՋՆԻ ՓԷԽԷՎՕՏ

Աս կիրքս, ինչէս փէշաթլամիշ արիլ իմ, տապէս ալ սաղ ակլամէթ հասնի իմիս եղնա պա, Կասպար Թաթէպէլայիշ Կալատուբավին ծնոքը, փօծօլուսթա ալսյս ալ տառցէք ամէն։

Եդնա պա, փօծօլուսթա մէմը ինծի հակըցնուք, շթօ զնաչիթ «Կալատուբ»։ Ան օրը մէջամ տուտացին ռասթ էկայ, հարցուցի, ան տապէս փէռէվօտ արաւ. «կալատուբ» կասէ, էար զնաչիթ կամինչչիկ։ Թաթեա խաղախնակ է, ամա նիչէվօ, քիչ մը հայնակի կուքա. ամա մեր կիտուն Փեռճը տապէս փէռէվօտ կանէ։ «Կալատուբ» կասէ, երկու ճուղապէ սասթավլիթ էղած է, «Կալ» կասէ, էա զնաչիթ փօ լիթերատուրնօմու «հարմանը». «տուբ» կասէ, էար զնաչիթ մեր Մօզդօքի նողայների լիզուայով «աղ». մեր Փեռճին առածէն կանը, քավքազին սէմթէրը, աղն ալ վարխա հարման կանին, հօճա պան. ինչ ալ ըլանը, փօծօլուսթա կըրցէք թօշնի փէռէվօտը։

Մէմալ ծեր կաճի մառճօ կրախմանակ լիզուային մէջը, տայմա ռասթ կու քամ «մաշ» «խանդիխանի» «կաշտաք» «սակութարը» «աճէպասնտալ», եա ինչ կիտամ, հազար չէշիտ տուտացին ճուղաղնեը. մէջատ պան չիմ հասկընալ. Փեռճն ալ պիթուն օրը զանիթ է, տօ տուզի՛ տօ սուզի։ Անպէս մարթ ալ չիքա վօր փէռէվօտ անէ։

Էնճամը նամուս Ամպակումիչին թառմէստվայով Բաթոնիստար մատծ օրը ռաստ էկավ՛ հարցուցի. սկսմի փօծօլուստա տար, շթօ զնաչիթ «մաշ». ախպարըս կասէ, մէտամը տապը արա, խօսք խալապալըխէն խալխիմ, կնայիս խօմ, ալայ քախաքքանեըը վօթքի էլիլ ին վաթաչչաթի նավումին. քըծէլ խալսածոխ, սլավարը կանիմ կուքամ, ալայը փէռէվօտ կանեմ։ Շիտակ վօր, ցէռեմօնին խալխէն էսէվ, մէմալ նայիմ էկաւ հէլլաք էղած։ Ուէ անանը տինընը կասէ, տապէս ալ խալապալըխ. համէ, կավատաս կասէ, Բաթոնիղարին մէջը ալ քախարքա, հօնինչնա մնացած չէր, ալայն ալ վաճըալ էկիլ էին, Բաթոնիղարը կեանքին տապէս ցէռեմօն տեսած չէր։

—Թալսեցմք տար։

—Հա կասէ, հանա սլավարն ալ պէրիլ իմ, տառ ինչ պիտի տաիս։

Սրածի փօծօլուսթա տար, զաճմէթ ալ ըլանը. շթօ զնաչիթ «մաշ»։

Համան սլավարը պացեց, նայեցավ ու տասց «մաշ» էար զնաչիթ չիչիվիցայ, եա հարոխի լման պան։

Հապա «խանդիխանը» ինչ ասիլ է։

Նորաէն պացից սլավարը. «խան» կասէ, էար զնաչիթ վէռօրցքի կնիազ. «դիս» կասէ, էար «տիս» եանըլըշ կըրած է, «տիգ» պիտ ըլա, ան վօր կովերու պզտիկերու պօչերուն տակը կփակչի ճանճի ֆասօնով ան է. իմիս թանձմնով երկու բնիւղով մէջատ «տիգ» ասիլ է, պօլշի նիչէվօ։

Ի՞նչ ասիլ է «կաշտաք»

Աս տապրա սլավարին էրկան նայեցաւ, էնճամը կասաւ. «կաշտաք» կասէ երկու ճուղապէ սասթավլիթ էղած է. «կաշի տաք».

—«Կաշին» կիտեա խամ կասէ։

—Կիտեմ տար, հապա չիտե՞մ։

Էյ շաէ, կաշին կաշի է կասէ «տաքն ալ տաք». զնաչիթ կաշիի տաքը ասիլ կուզէ։

Աֆերիմ տար, հապա «սակութարը» ինչ է։

Աս անքամ սլավարին չնայեցավ «սակութարն» ալ կասէ երկու ճուղապէ սասթավլիթ էղած է. «սակ» էար զնաչիթ կնիմարթօց վերխնի փլաթի։

Համէ, տար սակ կասիս նը, իսա ան սակէն չըլա. վօրնոր ասլիս պառիշնային խափեցիր, վերչէն սակ առիր փէշքէշ արիր։

Կաղ արի փօծօլուսթա կասէ, շախայի ժամանակ չէ. «թարն» ալ կասէ թար է. փօռուսկի վէկ, նափախմեր գվացառի վէկ, շաէ թար վէկ ասիլ է։

Է աղէկ տար, մի փարկանալ, եա շախա արի, տար, տուն ան տառ, ինչ ասիլ է «վաղօրօք»։

«Վաղ», էար զնաչիթ վաղուան օրը, ամա «օրօք» եանըլըշ կըրիլ ին, ան օրօք ըլալու չի, «օրօցք» պիտ ըլա։

Սրածի փօծօլուստա տար, «աճէպասանտալը» ինչ ասիլ է։

Աս ալ երկու խօսքէ սասթավլիթ էղած է. «աճէպիս էար զնաչիթ աճապ, «սանտալ» էար զնաչիթ թուֆլիի ֆասօնով կօշիկ։

Էնճամը ալայ պանը տեղով տեղով փէռէվօտ արաւ. հապա տապէս կիտուն փէռէվօտչիկ չունենայինք, ինչ պիտ ըլար հալերըս։ Եդնա, կակ եա դումայիւ, ալայ տուտացիները թօփ էղիլ իք Թիֆլիզ, քանթրօլ չիքա, պան չիքա, ինչէս սիրտերը կուզենայ, անպէս ալ կալաճի կանիք. ճանըմ ճանըմ, հայի լիզուն ալայ մալայ փօռթիթ արիլ իք. զրիլիք անթին։ Նէոժլի մէչերը մէջամ հայնակ կիտցող չիքա. հէյ կիտի աշխար. մէչէրըս մեր նաչչվանցիներէն մէջամ հայ թօ ըլար աէ, նայէ ինչէ՞ս կը սորվեցունէր թէմիզ հայնակ կալաճի։ Եդնա, ինչէս կերէւա, կազէթներըս պիտ տանուենք, մէջամ ալ փէռէվօտչիկ պիտ հախով նանիմաթ անինք, վօր ծեր կաճի մառճօ կրախտ լիզուէն պան հասկնանք. էսէ՞վ, տա էղա՛վ, պանի կլմանի։

Մէմէկ տաէն ալ, անպէս հօճա պանըր կկարթանք վօր, կարմընանք, խաթեա պուկվայլնը պան չինք հասկնալ։ Նափախմեր, մէկ օր ծեր կազէթին մէջը սիպէս նէկռամաթնի պան կարթացի. ճանըմ կամատիք չիտե՞ք ինչ է. փէմին տեղը պէմ կըրած է, կիմին տեղը քիմ կըրած է. թային տեղը տա կըրած է. մէմէկ տաէն ալ նէիզվէսթնի պուկվաներ ռասթ կուքան, չիմ հասկնալ, արապնակ է, նօղայնակ է, ճուֆուտն է, ախաչը չիտեմ. մէմալ նայիս սիպէս պուկվաներ ռասթ կուքան, ք. գ. ջ. ձ. վուտիքէն ալ կըրնճարիք, ծեր տատացին լիզուն սամ չօռթ նի ռազպիրեօթ։

Շաէ կնա հասկըցիր. է, տա հայնակ էղաւ, հայը տա չէշիտ եապանի լիզուայէ պան կհասկընա։ Եդնա, Փէրճերը հազար ներավ աշխարհ չէն քալ, կէնէ պէրէքէթ վերսին նարան, փէռէվօտ արաւ տառհալաթ պան հասկըցանք։

Է օրթնեալ մարթ, հայնակ կրէ տա, իտա տուտացին ալի վալէ կռախմանակը պէ՞տքէ վօր, կրէ տա չիտակ։

Եդնա, մէմալ էկէր կրելու ըլաք, փօծօլուսթա խառ տուտացի ալէ վալէ լիզուայով չկրիք, չէնէ Աստված ուկա, կերթամ ժամին ապարէն փեռուխանին փախ կուտամ, որ մէմալ ժամին ապարը, եա խանութի տառն, փօփէռոսցքի խուլամիշ չըլայ։ Կարտօֆիլին փութը 45 քայիկ է, վաճռով տանես նը 40 քայիկ է, մենք վիզիտով մեռալ ալ կըալցնենք։

**Պօնմուսին Մեկոսն**

---

## ԹԱՌԱՄԱԾ ՀԱՑԿՈՒՇԻՆ

Դու անուշ բուրած ես,
Իմ նախշուն մանկիկ,
Էլ չունիմ՝ բոյրիկ ես
Քեզ պէս սիրունիկ։

Փափուկ հողի մէջ
Քեզ զուար հանգիստ,
Խաղաղ քնի մէջ
Մոռացար վիշտդ ընդմիշտ։

Դու երկա՛ր տանջւեցիր,
Ապրեցիր շատ քիչ,
Եւ այս լաւ աշխարհից
Չ'հասկացար ոչինչ։

**Արմօ**

---

—Ե՞րբ է կինը սիրում ամուսնուն։

—Երբ իրան համար մօդայի պահանջած զգեստներ է գնում և ցանկացած ժամին տանից դուրս գալ թոյլատրում։

—Իսկ ե՞րբ է ամուսինը սիրում կնոջը։

—Երբ հակառակն է լինում։

—

—Ովքե՞ր են մշտական դերասան կամ դերասանուհիներ։

—Բոլոր կանայք, շատ քիչ բացառութեամբ միայն. որովհետև դերասանները միայն բեմի վրայ ու ներկայացման ժամանակ են գրիմով լինում, իսկ կանայք համարեա բոլոր ժամանակ և ամեն տեղ։

## ԲԱԼԱԽԱՆՈՒ ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎԸ

*Իմ՝ ազիզ խալաֆ ախպէրացս
Բեգասպար Դալատագալեանցին,*

*Ծամ՝ախեցի այրի տիկին Գէօզալ
ադաբաշիից պատմածիր.* Բաղօր»

Բալախանիիմը կայ, Մօսկովսկի-Կավկազ-գսկի» մին մեծ պրօմիսլա: Էս պրօմսլի խօզէյինները շատ բարի, քրիստոնեայ, սօցեալիստ ուետարանական մարթիկ են: Լաւ-լաւ օթաղներ, տուներ են տամ զուլլուղչիներին: Ազադութին ա, թեամից պատլամէնտ: Կանտօրումը զուլլուղ են անըմ հայ, ռուս, ջուհուդ, պօլակ, նէմէց, կնիկ, ախչիկ, ախըրը հեար ջուռա միլլաթ, շատ պառկս բեալբանամ ձիւրի շուն ալ քիթանա: Մին խօսքով անըան ազադութին, սահմանադրութին ա, որ էս զուլլուղչի կնանիքն ալ պատլամետ են շինալ իրանց համար—կանտօրի զուլուղչուհի Մաշա Մատուսևիչի կօրինեար:

Էս կօրինեարըմ դօշչայ Մաշան մին սոյդա ա դիւզացնըմ. կանտօրի միրզաներան մինը, ութանասուն տարական մին պօլակ. որ ունի կնիկ, 5—6 արախէրք, սիրահարւըմ ա մին ռեյսաարի թիֆլիզեցի կնգան վերա, անըմը Սօնիչկա, էաշը 23 տարական, թեօդա փակէած հարս: Սէրի սոյդան դիւզացնըմ ա Մաշան, երկու տարի առաջ: Հեանց քի ռեյսարը քնում ա մատերսկոյ, Սօնիչկան ալ քնամ ա Մաշայի կօրինեար. կանտօրի միրզա պօլակ բեօփադը, կանտօրի կօրծը թողած, կեամ ա Մաշայի կօրինեար: Դէ… վըր շատատուն, ասաց թուրքը, «դարա խալվաթ թիւլքի բեակ»… կանտօրչիկ պօլակը և ռեյսարի կնիգը ալ զուջ, պաչ, պաօշտի՝ հազարը մին կապէկ:

Տրանք անըան սիրահարւըմ ան քի, ատամի 1-ին ժամանակ ան նշանւկըմ, երկու հօքի փախչան զագրանիցա, ազատ, պատլամետով քաղաքըմը ապրան: Համմա աս պլանը կլոխ չի կեամ. ճանապարհիներան մին օր առաչ, ռեյսարը կնգան կամօդը պեացըմ տեանըմ ա, մին գեատտա պարօվակիր նամակներ, զապիսկաներ, կարթըմ տեանըմ ա քի, իրան կնիգը «եա» ա իլալ, միտքը ծուռ ա:

Էյ բաշուս գեօնըմ ռեյսար, փոնի կընգանթ անըան թադի, ռեխ-մախի լափ չախ արա, մէշքի դարբղաները փշրի, կլխի մազերան փոնի, տունի մէջով քաշ տու, լափ շինի զարազի կաշի. եդով ալ դէպէշ տուր պարեկամներին Թիֆլիզ. որ եկեցէք ձեր գիրիլին տարեցէք: Թիֆլիզան եկաւ թազւած կնգան քուրը և փեսան, տարին Թիֆլիզ, հիմի Թիֆլիզումն ա, պօլիցիան ալ պրօտօկօլ կիրեց: Հիմի սօյրաթ անամ պօլակ կանտօրչիկից:

Էս բեաֆտառը քի լիսիմ ա, որ ռեյսարը իրան կնգան անգըրմ ա, չան հալի ա քիցալ, վախըմ ա քի եառվ, նօրաթը իրան համնի, աս բեզըրեաթը կնիգ, արախայ թօղած՝ զարանին եդ ա քիսիմ, մին բաշ փախչըմ Բարուան, «իթաի բաթաի» իլիմ, տասը օր ա քամազան շուտ ան կեամ, չան քիթանըմ:

Հեանց աս փորցանքի համար, Բալախանիի կնանիքը ժողով են արալ «Մասկօմսկի-Կաւկազսկի» կանտօրի հայեաթեմը, մակլեր Մաշա Մատուսևիչի ան կօրինեատում, որ տեղ պօլակի և Սօնայի սօյդան ա դիւզաւլ:

Ջինըրի դործը պիտի քննի «Խաթաբալա» կուսակցութիւնը ինչպէս թունդ խաթաբալայեական գործ, ինձ ալ, հինչպէս Բաքուի գուբեռնի խաթաբալիտների պրիստաւիտելուհի, սամանծին հրաւէրով կանչալ ին ժողովին ներկայ իլիլի, որ օրէնքան տիւս պեան չի մնուի:

Մին հազար վեց հարուր օխտանասուն չորս կնանիք ին հաւաքւալ—դարաբաղցի. շամախեցի, նուխեցի, գենջեցի, ախլծխացի, երեանեցի, ալեքսանդրապօլցի, ալ չորս եվօ բղնախչ, որ ջահաննամեցի: Թիֆլիզեցի կնանիք չին եկալ, չինըրի դրեաթներին կղալ էր, որ ռեյսարի կնիգը Թիֆլիզեցի ա:

Ժողովը պացեցին քիշերւայ սահաթի 6-ին, ճրաքները նոր վառած. Վէրջացաւ քիշերւայ սահաթի երկուսին:

Ժողովում խօսում ին թունդ կիրափառլիւզիով: Եա, Բեատապար ջան, ինչ որ խօսալ ան, մին-մին կիրիմ ամ, լաւ կարթի, լաւ լիսիր, երկու անգօջ, երկու աչք ալ ուրիշս պարապ ատ, տես, ֆիքիր տուր, որ մեր հայերը հինչ օրի ան հասալ:

… Շատ հեառքըրքիր է,—խօսեց նախագահուհի տիկին Շէյթանթութեանը,—ինչպէսի հանգամանքների մէջ են կատարւել այդ միգըերը. անհրաժեշտ է հարցնել մակլեր Մաշա Մատուսևիչից:

Մաշան նոր մտաւ, հէնց քի արա տեսան, ժողովի կնանիքը ծեռները քիցեցին կըլխներին… դուս, դուրս, հեռացրէք ան անիրաւին, ինչմէ եկաւ, այս բաղէխ ադաներ, շանատտակ անենք այդ անշնորք կնոջը, որ այնքան գեղեցիկ, ջահիլ, ուրախ ու փայլուն հագնւած, կանտօրի ծառայողներին

## ՖԵԼԻԷՏՕՆ

### ՍԻՐՈՂ ՍՐՏԵՐ

(Պօէմա, կարելի է և օպերայի համար)

Կարօն Վարիայի հետ սիրաբանութեամբ էր պարապում: Իսկ Աղասին նստած, զանձակեցի փահլեաններին համարելով մտածում է: (պաուզա):

Ալէգրօ — Աւագ. Սարիբէգ,
Նիկօլ ու Պետրոս.
Արծիւ Զաւաթ-բէգ,
Կօլօտիկ Պօղոս…
Աւրին, որ կը գան
Բօկսեր գրգանին,
Նրանք ցոյց կը տան
Ցիմար Կարօին:
Նրանք իմ գինւորներ,
Ես նրանց զօրապետ,
Նրանք քաջ ֆիգայներ
Ես նրաց իմբրապետ…
Տղերք, շուտ սկսէք,
Բռունցքներ պատրաստէք,
Շրջան կազմեցէք,
Ապա ծեծեցէք…
Կը տան ու կը տան
Եւ կը գլարճացնեն

Շքեղ Մարօին…

Երբ Աղասին մտածում էր, խեկոյն ներս ընկան մի քանի տղայք, գիմնազիական գլխարկներով, նշանները պոկած, իսկ նրշանաթելերը թանաքով ներկած:

Նրանք գիմեցին մեր քաջ Աղասուն, որ շուտ գնան կռւելու…

Եւ այսպէս ասելով, բոլորը միասին, սենեակից դուրս թռան և ուղեւորւեցին, դէպի Գօլօվինսկի պրօսպեկտը: Հասնելով որոշւած տեղը, նրանք խեկոյն և եթ ցրւեցին, Հանդէսը պէտք է սկսէր Աւագը:

Ահա անցնում է Կարօն, շապօ, գրքերը ձեռին:

Աւագը տեսնելով, գալիս է առաջ, և ջենտլմենավարի կողքով անցնելիս, բաթում է:—

Կարօն մի երկու վայրկեան Աւագի յետևից նայում և ասում է:

—Այ քեզ յիմար մարդ,
Անկիրթ ու ագէտ,
Սրան էլ կասեն
Կրթւած աշակերտ…

Աւագ — Ներեցէք պարոն,
Այդ ձեզ էք ասում.
Այդ ձեզ առաջն էք
Դուք համարձակւում…

Կարօ — Շատ լաւ եմ անում…
Եթէ չես ուզում,
Որ քեզ անպատւեն,
Էլ մի եա բօթում…

Աւագ — Դու դեռ խօխայ ես…
Իզուր քո գլխից
Վտանգ մի ցցիր…
Գնա, հեռացիր…

Կարօ — Չեմ ուզում գնալ,
Այստեղ պիտի մնամ,
Այդ քո գործը չէ.
Երբ կուզեմ կերթամ…

Եւ ամեն կողմից տղէրքը դուրս գալով, մեր խեղճ Կարօին ուրին, ու ուրին, միայն Նիկօլը հեռու էր կանգնած, որովհետև նա այնքան էլ զօրեղ չէր, և կարող էր պատահել, որ նա էլ ծեծւէր:

Կարօն լալիս է…

Վայ… օգնեցէք…
Մեռայ… տղէրք…
Ողորմացէք…
Հերիք արէք…
Городовой!..

Աղասի — Տղերք, постой
Երբոր կասեմ,
Այն ժամանակ
Ես կը փախչեմ,

թողած, ջահել հարսին ծանօթացրել է մի քեաֆթառ, ատամները թափուած 80 տարեկան մարդու հետ…

Մաշան տեսաւ քի պեանը փիս ա, թողացաւ փախաւ։

Շատ կնանիք շատ երգան ճառեր խօսեցին, նրանք չէին, մին խօսքով մեղաւոր ան համարըմ սեյխարի կնգան ու Մաշային, որ տրանք անքան անշնորք ան իլալ, որ չան կարացալ երկու տարի սեկրետ պահան և խայտառակել ան կնանիքրանց անըմը։

Տիկին Զոհրաբագանեանին խնթրեցին, որ քարտուղար իլի, նրա ուրին մին թարախա թուխտ, թանաք, գալամ, նատացրին նախագահուհի Շէյթանթութեանցի մօտին, պիտենենի սօղի առաջ։

Եառվ նախագահուհին մին ճառով ժողովի վճիռը ասեց, սեկրետար արեց. Զոհրաբագանեանը կիրեց։

—…Յարգելի ժողովականուհիք, իմ թաղցրիկ քոյրեր.—սկսեց նա.—նայելով, լսելով բոլոր ճառախօսներից. քննելով բոլորից կարծիքը և համոզմունքը, ես, որպէս նախագահուհի, եկայ այն եզրակացութեան, որ բոլորդ թքում և սև մուր էք քսում այն անկնոջ երեսին, որը չկարողացաւ կանանց գաղտնիքը պահել։ Ես հաւատացած եմ, որ մեզանից իւրաքանչիւրս, որ այստեղ հաւաքուած ենք, բացի մեր ամուսիններից, ունենք սիրեկաններ, ջահել, վառվռուն երիտասարդներ, որոնց հետ գիշեր և ցերեկ քէֆ ենք անում, բայց մեր ամուսինները այդ չեն իմանում. նոյնիսկ մեզ երկու օրով քաղաք են ուղարկում, որովհետև մենք մեզ պահել գիտենք և չեն կասկածում, չնայելով, որ մեզ հետ քաղաք ենք տանում մեր սիրեկան երիտասարդին։ Բայց այն անշնորհք տիկինը, չնայելով որ Թիֆլիզեցի է և լաւ վարպետ պիտի լինի, երկու տարի չկարողացաւ սիրականին պահել, այն էլ մի քեաֆթառի, որի նմաններին, մենք մեր կուխնիներում ենք պահում…

«Հաւատացէք, ընկերուհիք, չորս երկար ամիս և իմ ննջարանիս շկաֆի մէջ՝ ջահել, 18 տարեկան վրացի եմ պահել… Մի զարմանք. այդ պատանուն կանգնեցնում էի շկաֆի մէջ, իսկ սպիտակեղէնս երեսով քաշ տալիս։ Ամուսինս թէյ խմելուց յետոյ, երբ գնում էր հարեւան պրօֆէսորի հետ թուղթ խաղալու, ես շկաֆից հանում էի սիրեկանիս, լաւ ուտում, խմում էինք ու քէֆ անում, իսկ երբ կէս գիշերին, ժամի 2—3 ամուսինս գալիս էր, դուռը ծեծում, վրացիին մտցնում էի շկաֆ, աչքերս տրորելով դուռը բացում և նախատում էի ամուսնուս, թէ ինչու ինձ մենակ է թողնում, անհանգիստ եմ լինում և նա սիրտս շահելու համար, տասը րուբլուց պակաս չէր նւիրում որը ես հետևեալ օրը տալիս էի վրացուն ծխախոտի և այլ ծախսերի համար։ Այդպէս և ձեզանից շատերը արած կը լինին, բայց շատ զգոյշ ենք տանում մեր գործը։

—Այո, այո, կեցցէ նախագահ… Բղաւեցին ժողովի կանայք.—մենք գիտենք, բայց այդ փուչը մեզ կասկածի ենթարկեց, «Бакинецъ» լրագրին էլ այդ դէպքը գրել է, մենք խայտառակուած ենք…

—Մի վհատէք, սիրելի քոյրեր.—շարունակեց նախագահուհին.—մենք այդ ժողովի արձանագրութիւնը պիտի ուղարկենք խաթարալիսների պարագլուխ, նորին պայծառափայլութեան Գասպար Կալատուզեանցին, որ նա, համաձայն կուսակցութեան հիմնական ծրագրի, ցուցմունքներ տայ մեզ, թէ ինչպէս վարուենք Թիֆլիզեցի Սօնայի հետ։ Նա փախած է Թիֆլիս, մեր շրջանից հեռացած է, նրան պիտի դատի ենթարկել իւր անզգուշութեան համար, բայց նա այստեղ չէ։ Միաձայն խնդրենք պ. Գասպար Կալատուզեանցին, որ նա իւր ներկայացուցիչուհի-Դէօզալ Աղարաշիի միջոցով մեզ յանձնէ Թիֆլիզեցի աղջիկ, սեյխարի կին Սօնային, որպէսզի կարելի լինի նրան ան ձամր խօսեցնել և մի փաստ գտնել արդարացնելու, կամ էլ, եթէ փաստ չկայ, խիստ պատժելու, որը, թէ մէկը ու թէ միւսը, կարող ունի մեր պատւի հետ և մենք նրան պատժելով, կամ արդարացնելով, մեր ամուսինները կտեսնեն, որ մենք ուրիշների հետ կենակցող կանանց ատում և արհամարհում, պատժում ենք, որովհետև նրանք իրենց ամուսիններին զուաձանել են։ Ի՞նչ էք ասում, համաձա՞յն էք։

«Այո, այո… համաձայն ենք։

Արձանագրութիւնը կիրեց, ցե՛ր քաշեցին, ուրին ինձ, որ իրկամ քեզ, որ ան կնգան փանիլ տաս, իրկես Բաքու ինձ մեբայ։ Խնթրըմ ամ, աս արձանագրութիւնը թաքուն պահես, ոչորի չի ասես, որ աս ոչ պարով կնանիքը, ինձ լափ կը սպանան։

Իմ կարծիքս ալ նա աս քի, Բալախանի կնանիքրանց հաւաքես, լաւերին պեաց թողնես, խա՛ փիսերին թափես խարաբայ հորերի մէջ։

Բեասպար ջան, յոյս ունամ քի, մին շապաթըմը ան կնգան կը իրկես, համմա եկող սաֆար անանց անշնորք ախչիգերը Բաքու մի իրկէք, Բաքուի լօթիներն ալ ուսում սաած ան. սես հեռյա աս 80 տարական կանտօրչիգն ա, որ Թօյվլամիշ ա արալ, սես ջայՑըլը հինչ կանի…

Մնամ քու քիւրացու,

Դէօզալ Աղարաշի

---

Դուք էլ ողբըք,
Շատ չպատէք,
Հերիք կանէք
Ու կը փախչէք…

Ազատու ասածներին ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում, որովհետև նրանք բոլորը, բացի Նիկօլից, ոգևորուած են իրանց հերոսութեամբ։

Նիկօլ
Վայ, վայ, շուտ արէք…
Ահա գալիս են…
Բռւականացէք…
Ոստիկանները
Մեզ մօտ են գալիս…
Ամբոխը արդէն
Ջայներ է տալիս…
Եւ դվօրնիկները
Փայտերը ձեռքին…
Մեզ են մօտենում…
Շուտ արէք, փախչենք,
Ցանի չեն բռնել…
Շուտ արէք, պրծէք,
Ցանի չեն հասել…

Նիկօլը փորը բռնած իր ընկերների չորս կողմն էր վազում։ Նա այն քաջերից չէ, որոնք ծեծում են Կարօին, նա միայն այնքան գիտէր, որ զօրեղ լինելը շատ լաւ բան է և այդ պատճառով, աշխատում էր այդպիսի դէպքերին աշխատակից լինել։

Այո, նա ուզում էր, բայց միենոյն ժամանակ վախենում էր, զուցէ իսկոյն բռնեն, հետոյ կը տանեն ոստիկանատուն. կը կանչեն հայրիկին։ Ուղիղ է, հայրիկը կազատի, բայց նա աւելի լաւ նախաճաշիկ կուտացնի։

Ուստի, այդ պատճառով, նա աշխատում էր, որ իրանց խումբը շուտով թողնի կռւի ասպարէզը և հեռանայ։

Կարօ
Городовой!…
Сюда, сюда!…

Ազատի
Постой, постой!…
Куда. куда?…
Տղերք, փախէք,
Բանը բուրդ ա…

Երբոր Կարօն ոստիկանին օգնութեան կանչեց, «փահլեանօններ» իրանց խմբապետ Ազատու հետ իսկոյն փախան, թողնելով Կարօին արիւնոտ դէմքով, շրջապատուած մաղաթներով, մամզէլներով և բարեխիղճ պարոններով։ Կարօն ամաչեց պատմել շրջապատողներին իր գլխի անցքը և արիւնահոս վէրքով, ուղեւորւեց դէպի տուն։

Ահա, այսպէս «ցոյց տւեց» Ազատին Կարօին, ցոյց է տեսնել, թէ ինչպէս է ցոյց տալիս Մարօն։

Լրաես № 30-ից։

---

«ՎԻԶԻՏՆԵՐ»

Տիկին Անեան, իւր արդ ու զարդը վերջացնելուց յետոյ, կանչեց ծառային և ասեց.

—Դուրի, հրամայիր լծեն կառքը. ես այսօր ուզում եմ մի քանի «վիզիտներ» անել։ Ես կառքից ամենեին չեմ իջնելու, որտեղ որ կառքը կանգնեցնել կտամ, այնտեղ իմ վիզիտնի կարթերից մի հատ կթողնես, լսեցի՞ր։

—Դէ, ոնց չլսեցի, աղջիկ պարոն.

—Դէ՛հ, գնա, և շուտ կառքը պատրաստիր։

—Տիկին Անեան շրջելով քաղաքի կէսը, դարձաւ ծառային և ասեց.

—Դուրի, կառապանին հրամայիր, որ հիմայ անցնի, Չիքեանցների, Զամշեանցների, Զօրանեանցների, Զախմախեանցների, Զալուղեանցների տների մօտից։

—Դէ էգ ոնց կլի, աղջիկ պարոն,—պատասխանում է ծառան,—իմ ձեռին Յացել

ա մին «ակռաւ տատանոց», մին էլ մի «փոքրիկ կեարմիր տուզը»

Բանից երեւում է, ծառան փոխանակ վերցնելու այցետոմսերը, վերցրել է խաղաթղթերը, և որտեղ որ խանումը հրամայել է կանգնել, ծառան այդ խաղաթղթերից ամեն տեղ էլ, մի-մի հատ թողել է։

*Խորէն-ժան-դը-բիւլ*

## ՍՏԱՑՒԱԾ ԳՐՔԵՐ

Մ. Ք. Ղազարեանց—Արշակ Երկրորդ պատմական կենսագրութիւն. գինն է 30 կ.

«Հասկեր» №11 նոյեմբեր. «Հասկերի» հրի յաւելուած՝ «Բեռի Մկօ» պատմուածք.

«Աղբիւր» № 11 նոյեմբեր։

## Ա Զ Դ

Խնդրումենք բաժանորդագրուել ցանկացողներին, հասցէները պարզ գրել և ամեն տեսանողին էլ ասել, որ «Խաթաբալան» ամենակարևոր թերթն է, և որի կարդալն անհրաժեշտ է նամանաւանդ ծիծաղելու համար։




ԶԱՐԴԱՐԱՐՈՒ-ԹԻՒՆՆԵՐ



МАГАЗИНЪ
Композиція
Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8



Громадная экономія
шведскаго композиціон. бѣля.
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
Воротниковъ. манишекъ и манжетъ.
Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ
передѣлка въ любой фасонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА 30—21

О-де ЛИСЪ №4711
EAU DE LYS
ՍՊԻՏԱԿ, ՎԱՐԴԱԳՈՅՆ ԵՒ ԴԵՂԻՆ ԳՈՅՆԵՐԻ,
Բոլորի կողմից ճանաչուած տուալէտի միջոց
ԵՐԵՍԻ ԼԻԱՆԱԼՈՒ,
թարմութիւնը, երիտասարդութիւնը պահպանելու և երեսի պզուկները և բոլոր անմաքրութիւնները հեռացնելու համար։
Ферд. Мюльгенсъ
Кельнъ н/Рейнѣ отд. въ Ригѣ
6—2


—

«Սեղ զրուցին»

—Դէհ, բարեկամ, պատմեցեք, երջանիկ ես, որ ամուսնացար, ինչպէս է գործերդ։

—Է՛հ, ինչ ասեմ, շատ վատ է։ Ես ոչ իրաւունք ունեմ ծխելու, ոչ խմելու, մինչև անգամ տանից դուրս գալու իրաւունք էլ չունեմ։

—Ուրեմն դու. ափսոսում ես որ ամուսնացել ես։

—Ոչ... ասենք ես, ափսոսալու էլ իրաւունք չունիմ։

—

— Առացէք խնդրեմ Իւան Սերգէյիչ, արդեօք ձեր աղջկայ ձեռք ազատ է։

— Իսկ ձեր ձեռքը ազատ է։

— Այո իմ ձեռքը ազատ է։

— Այն ժամանակ, վերցրէք այդ ազատ ձեռքով ձեր գլխարկը և գնացէք։


ՓԱՐՈՍ

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդուածներ, գրած յատկապէս օրացոյցի համար։ Սոնի հայերիս մէջ դեռ լոյս չտեսած արժէքաւոր յաւելուած «ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԳՐԱԳԻՐ» վերնագրով, որի մէջ զետեղուած են քանի՞ հայ գրողների պատկերներ իրենց համառօտ կենսագրական և գրական գործը որոշող յօդուածներով։ Վեհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։

ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

**Մասն** I. 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պասկի արարողութեան թոյլատրելի օրերը, 4) Օրացոյց 1910 թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Ոը օրը խոնութիները պէտի փակել։
**Մասն** II. 7 Ջեմարօ, 8) Օրէնսգրքեր, 9) Զինուորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինուորական ծառայութիւնը. 10) Մեծ պետութիւնների զինուորական բիւջէները։ 11) **Պատմական.** Միրձաւոր արեւելքի վերածն. Վարդման, 12) **Աշխարհագրական.** Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բեւեռի բացումը, 14) Առողջապահութիւն ա) Տարւայ յարատեւութիւնը, բ) **Տիեզերք**, Տարրական հաւկացողութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական աղիւսակ, 15) **Գիտական ուսագիտական** ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներն են, գ) Երազի հագերանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) **Առողջապահական** ա) Մենք շատ ենք ուտում, բ) Անդիվնորմալ բաժինը 24 ժամւայ համար. գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը. 17) **Գիւղատնտեսական.** Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան 18) **Գիտական.** Ջուրը. Ց. Աբովեան։ 19) **Լեզուագիտական** ա) Հայերանոտ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարբառ. Մեռելների այրումը. 20) **Ճշգրտական**, Կապը կտրած կինը, Նար-Դոս 21) **Դրացական** ա) Ուսումը աղքատութեան Գ. Աղայեան բ) Ազատ մանկան տուներ Դ. Վէնցել, 23) **Կենսագրական** ա) Մատթէոս II, կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 24) **Առևտրա-Արդիւնաբերական** ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Դիւղական բանկեր, Ա. Ղալայչեան գ) Հարկեր և տուրքեր, ե) Պարտամուրհակի հարկեր, զ) Նոտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ի) Կանխավճարի մասին, լ) Նուէր 25) **Փոստ.** (Կանոնադր. նորագոյն հրատարակ։ Այս մասը վերցրած է միայն նորերին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն ասկադներով և ցուցակներով։ 26) **Անեկդոտ**, 27) **Զւարճալիք** ա) Զւարճալի խնդիրներ, բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տանեկու անշաւիղ փորձ (ասլանի խաղեր), 28) Մոլը, Վ. Փափազեան։ 29) **Առասպելներ** 30) Արձանագրություն։
Յաւելուած **ԹՈՒՄԱՆԵԱՆԻ-ԳՐԱԳԻՐ**, գեղեցիկ թղթի վրայ, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդուածներով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Օտար քաղաքացիներին 20% զեղչ և փոստի ծախսը մեր վրայ։
Դիմել Тифлисъ, Типографія „Іоха" В. Вардапяну.
0—4

Կովկասում քանակութեամբ և գիրքով ԱՌԱՋԻՆԸ արագատիպ մեքենաներ

# Խրոմո-Լիտոգրաֆիա

# Ա. Ի. ՅԻԽՈՎԻ (երբեմնի Եակշաու)

Գոլովինսկի պրոսպեկտ տուն Օրոյեանի, տելեֆոն № 433

Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատուէր տուողների, որ այս տարւայ նոյեմբերի 1-ից, վիմագրատունը ամբողջովին իմ սեպհականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակել և աւելացրել նոր կոնստրուկցիայի և ամենամեծ գրքի արագատիպ մեքենայով՝ իւր բոլոր օժանդակիչ պարագաներով։ Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատուէրները կատարել շուտ, ճշտութեամբ և աւելի էժան միւս վիմագրատուններից։ Յանկանալով վիմագրական գործը Կովկասում հասցնել իր արժանի բարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ ժամանակակից տեխնիկային։ Յոյս ունիմ, որ պ. պ. պատուէր տուողները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերյիշածներս և կդառնան ինձ իրանց յարգելի պատուէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կդնեմ բաւարարելու պահանջները։

Յարգանքներով Ա. Ի. ՅԻԽՈՎ.

5—1

— «Նոր» հաստատում է, որ ինքը 30 տարեկան է։

— Օ՜... նա յայտնի է իւր ճշտութեամբ։

—

Փաստաբան.—Այո՛. ձեր գործը շատ ծանր է տիկին։ Ձեզ բռնել են չարագործութեան տեղում. դուք խաբել էք ձեր ամուսնուն։

Տիկինը.—Ինչով եմ ես մեղաւոր. նա ինձ դաւաճանեց և խաբեց. ասեց որ գնում է գիւղ 3 օր ժամանակով, մինչդեռ ինքը արդէն մի ժամից վերադարձաւ տուն։

—

— Քանի մասերի է բաժանւում երկրագունդը։

— Երկու մասի։

— Ինչպիսի՞

— Եւրոպա և Արտասահման։

—

Դերասանը.—(յոնկով քամու սուլոցը).— Տեսնում էք ինչպէս է շւացնում քամին, կարծես գայլերկան լինի!

ՃԱՇԱՐԱՆՈՒՄ

—Այ մարդ։

—Ի՞նչ էք կամենում։

—Հացէնների... գիրք... կամ այդպէս։

—Ունենք։

—Դէհ... այդպէս... նայիր... որտեղ... եմ ահաւասարակ... ես տրքում։



## Տղամարդկանց դերձակ

## Ն. Ս. ԼԱԶԱՐԵԱՆՑ

(Երևանեան հրապարակ, տուն Թարագեանի № 3 հարկաբաժում)

Ընդունում է տղամարդկանց հագուստի պատուէրներ։

Նոր ստացել է մեծ քանակութեամբ՝ արտասահմանի և Ռուսաստանի ֆիրմաներից սեզոնի կտորներ։

Պատուէրները կատարւում են ճշտութեամբ և բարեխիղճ։

Գները մրցումից դուրս։ 4—1

Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



# ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սմնդումեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամեն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԻ

Ունինք մեծ քանակութեամբ թարթի դօշ, Դօնի և տեղական բալիկ, ճիպա, ցալձւալա, եանի և այլն։

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կոնսերւներ Գները ամենաչափաւոր։ 20—13

Դու այսօր բոլորովին փոխուած ես պ. Ալէքսանդր, ինչ է պատահել։

—Ոչինչ, դատարկ բան. ես դարձեալ կուեցի կնոջս հետ։

—Բայց ինչու չես աշխատում հեռու մընալ ընտանեկան վէճերից։

—Շատ եմ աշխատում բայց չի լինում։

—Ինչպէս...

—Ինքդ դատիր. ես և կինս անցնում էինք «Նարբերեմնի» փողոցով, յանկարծ մեզ հանդիպում է տիկին Լուիզան. կինս ասեց որ տ. Լուիզան շատ գեղեցիկ է և ես էլ ասացի որ գեղեցիկ է։

—Է. յետոյ։

Էլ ինչ յետոյ. դորանից էլ առաջացաւ մեր կռիւը։.. Խ.

ԱՂՔԱՏԸ

—Ողորմութիւն արէք, տիկին։

—Ե՛կ, ողորմելի, կերակուր տամ կեր!

—Պէտք է ասել ձեզ, յարգելի տիկին, որ ես սովոր եմ միշտ կերակուրից յետոյ, մի լաւ բաժակ սպիտակ գինի խմել։

—

—Ի՞նչը կարող է անյաջող լինել, ինչպէս մարդու՝ այնպէս էլ քաղաքի համար?

—Գլուխը, և քաղաքագլուխը!

## ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ!!

Պուշկինեան պասաժ № 4—6

## ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Յատուկ գերձակային պիտոյքների.—Տղամարդկանց և կանացի զանազան կոճակների, մետաքսի և բրդի չերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սուտասներ, փունջեր դայթաններ։ Այդտեղ էլ ընդունւում են պատուէրներ զանազան կտորներից շինող կոճակների, նոյնպէս ամեն տեսակ վայելչաձև ապրանքների. մշտապէս ստացւում են սեզոնի նորութիւններ։ Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզւել խանութիս մէջ։

Ապրանքների գները նշանակուած են ամենաէժան։

10—8 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ

Մանուֆակտուրային վաճառք

МАНУФАКТУРН. магазинъ

## ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ

И. Г. КАЧКАЧЕВА
Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սօլօլակեան փողոցի վրայ, «Պրոֆօգնիկ ընկ.» խանութի շարքում, Ազովո-Դոնեան բանկի ներքեւում, (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացուած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ. Ստացուած են մեծ քանակութեամբ սէզօնի նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր դպրոցական հիմնարկութիւնների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պէշներ՝

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Բրդէ շալեր, պլիշի, բայկի, պիկէ, ատլասի եւ Քաշմիրի վերմակներ։

ՔԱԹԱՆԷ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ

ամենալաւ ֆաբրիկաների, զարդերի տիւլ, պլիւշի սփռոցներ, թուլիչ, պլիւշ և մանչեստր։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նանսուք և չիթ։ Բամբակէ գործուածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով։

ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ

ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

—օ— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —օ— 20—6

ՇՏԱՊԵՑԷՔ ԳՆԵԼ

## Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆԻ

Մանուֆակտուրի վաճառատունը Թամամշեանի քարւանսարայում №№ 19, 22, և 23 տեղերը վերջացնելու պատճառով

ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ

Ծախւում է եղած բոլոր ապրանքը—ամեն տեսակ մետաքսի, բրդի մահուդեղէնի, քաթանի, բամբակի և կահաւորութեան կտորներ։

ՕԳՏՒԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ

10—8

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԿՈՄՊԼԷԿՏՆԵՐ

ՓԱՌԱԿԱԶՄ

1906 թ. արժէ . . . . . . . . 5 րուբլի
1907 թ. . . . . . . . . . . . 7 ր. —
1908 թ. . . . . . . . . . . . 7 ր. —




13—7


Գողի մէկը գիշերուայ կիսին, մտնելով մի անցորդի, հարցնում է.
— Ժամի քանիսն է, բարեկամ։
— Ժամը՞, գիշերուայ մէկն է.—պատասխանում է անցորդը և մի ապտակ խփելով գողին, դարձեալ շարունակում է իւր ճանապարհը։
Գողը շշմած ապտակից՝ նայում է անցորդի յետեւից և մրթմրթում.
— Լաւ էր որ ժամի մէկն էր և ոչ թէ 12-ը, եթէ ոչ նա ինձ տասն և երկու այդպիսի փառաւոր ապտակներ կուտեցնէր։

Խ.

—

— Ներեցէք մեծյարգոյ պարոն, իմ դրամատենակում ընդունուած է, գլխարկը վերցնել։
— Թոյլ տուէք նկատելու ձեզ, որ ես մինչև անգամ միլիոնէր Ռօդշիլդի առաջ եմ՝ չեմ վերցնում գլխարկս։
— Իսկ դուք ճանաչում էք նրան։
— Ոչ, ես մինչև այժմ դեռ չեմ տեսել նրան։

Խ.


Թիֆլիս քաղաքի կենտրոնում

Վայեննայեա փող. սեփ. տուն № 5.

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ

## ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿԻ ՆՈՄԵՐՆԵՐ

Սենեակները շքեղ կահաւորուած, վաննա և դուշ ամենամեծ յարմարութիւն ընտանիքով եկողների համար։

Կին և տղամարդ ծառաներ ՔԱՂԱՔԱՎԱՐԻ.

Նոմերները 1 ռուբլուց սկսած և աւելի

Ամսականով կեցողներին առանձին մեծ զեղչ:

ՋՐԻ ՎԱՌԵԼԻՔ

Գոլովինսկի փողոցից 2-դ տունը, բազզօնի փոստի դիմաց, որի ներքին յարկում տեղաւորուած է Վլադիկավկազի, Թելաւի և Սղնախի տրակտի գրասենեակը։

Տան սեփականատէր Ալէքսանդր Մ. Յարութինով։ 5—2


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

Типографія Т-ва „Культура“, Вельяминовская, 18.




—Բարի եղէք խնդրեմ յայտնել, դուք այս օրերս ի՞նչ տեղեր էք մտադիր այցելել։
—Մերձաւոր արեւելքում դեռ ևս բաւական տեղեր կան. Ճիշտ է Ադանայում լաւ զբօսանքներ ունեցայ, բայց յոյս ունեմ, որ այսուհետեւ էլ լաւ կը լինի այնտեղ, որովհետեւ իշխանութիւններն էլ ինձ սիրում են։
—Ուրեմն ձեր տաղանդի երկրպագո՞ւներն են նրանք։
—Ի հարկէ, ի հարկէ։







ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**1910 թ.**

# 5 ՏԱՐԻ ԽԱԹԱԲԱԼԱ 5 ՏԱՐԻ

## Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունատիպ պատկերազարդ հայ շաբաթաթերթն է:
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական եւ եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով։

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն շարունակւում է նոյն ուղղութեամբ, նոյն արտիստների եւ գրագէտ երգիծաբան-ների մասնակցութեամբ, ինչպէս եւ անցեալ տարիները:

**ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ**

**Գրիչն ու Թանաքը, Ներկն ու Հանաքը**

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՊԱԿԱՍ ՎՃԱՐՈՎ

## „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն առայժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ, կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ, իսկ ապագայում ամեն օր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան | 5 րուբլի |
| Կէս տարին | 3 ր. |
| Երեք ամիսը | 1 ր. 50կ. |
| Թիֆլիզում տարեկան | 4 րուբլի |

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան | 7 րուբլի |
| Կէս տարին | 4 ր. » » |
| Երեք ամիսը | 2 ր. 25 կ. |
| Ամիսը | 75 կ. |

**«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԵՒ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ» ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ**

| | |
|---|---|
| Տարեկան | 10 րուբլի |
| Կէս տարին | 6 ր. |
| Երեք ամիսը | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը | 1 ր. 20 կ. |

Հասցէն Тифлисъ. Редакція „Хатабала“. Հեռագրով Тифлисъ „Хатабала“
Արտասահմանից Tiflis Caucas Redaction «Khatabala»